
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ
200-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

2017 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ԳԱԱ արվեստի ինստիտուտը՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ, գումարեց “Հովհաննես Այվազովսկի – 200” գիտական նստաշրջանը:

Գիտական նստաշրջանին ընդառաջ՝ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հայկական հիմնադրամի աջակցությամբ լույս տեսավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, - ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի “Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի” եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) աշխատությունը:

Գիտաժողովը բացեց Արարատ Աղասյանը: Նա նշեց, որ Արվեստի ինստիտուտում տարիներ շարունակ զբաղվել են Հովհ. Այվազովսկու արվեստի ուսումնասիրությամբ, և գիտական այս ժողովն ակադեմիական բնույթ է կրում: “Այվազովսկու հորելյանի հանդեպ անհաղորդ չէր կարող մնալ մեր ինստիտուտը, – ասաց Ա. Աղասյանը:– Պարբերաբար հրատարակվել են գրքեր, որոնց թվում հիմնարար մի աշխատություն է ընթերցողի սեղանին դրել նաև ակադեմիայի աշխատակիցներից լուսահոգի Մինաս Սարգսյանը”:

Ողջունելով մասնակիցներին՝ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը կարևորեց գիտական նստաշրջանի անցկացումը և նկատեց, որ Այվազովսկու աշխատանքների արժևորման խնդիրը բավական բարդ գործընթաց է: “Մենք պետք է կարողանանք մեր մեծերին ըստ պատշաճի գնահատել ու ցույց տալ աշխարհին: Կարծում եմ, որ Այվազովսկու հանճարին վայել զեկուցումներ կհնչեն, ու նս մեկ անգամ կարժևորվի նրա ստեղծագործական ժառանգությունը: Խնդիրներ կան, որ պետք է լուսաբանվեն: Առաջին հերթին պետք է համարձակվենք անվանել նրան հայ գեղանկարիչ, ով թեպետ ծնվել է Ռուսաստանում, բայց շատ այլ մտավորականների նման աշխատել է իբրև հայ ստեղծագործող”:

Իհարկե, Հովհ. Այվազովսկու մասին դեռևս իր կյանքի օրոք ու հետագայում գրվել է ծով գրականություն, բազմաթիվ ուսումնասիրություններ, և թվում է, թե արդեն ամեն ինչ ասվել է ու գրվել, նորություն ասելը գրեթե անհնար է: Սակայն գիտական նստաշրջանում եղան հայտնություններ, նորություններ:

Գաղտնիք չէ, թե մեծ նկարիչն ինչ ազդեցություն է թողել XIX դ. ռուսական և հայկական կերպարվեստի ներկայացուցիչներից շատերի վրա: Արարատ Աղասյանի “Հովհաննես Այվազովսկու իտալացի սանը. Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսի” գեկուցումից պարզ դարձավ, որ մեծահամբավ նկարիչը նկատելի ազդեցություն է թողել նաև եվրոպացի առանձին վարպետների ստեղծագործության վրա: Բանն այն է, որ Այվազովսկու սեփական արվեստանոցին առընթեր 1865-ին բացված “Համընդհանուր աշխատանոց” կոչված կրթարանում, առավելապես ամռան ամիսներին, սովորել ու ստեղծագործական փորձ են ձեռք բերել ոչ միայն Ղրիմում ծնված, այնտեղ բնակվող սկսնակ և ուսյալ արվեստագետները (ինչպես, օրինակ՝ Ադուլֆ Ֆեսսլերը, Էմանուել Մահտեսյանը կամ Կոնստանտին Բոգանսկին), այլև Ռուսաստանի տարբեր ծայրերից ու արտասահմանից Թեոդոսիա եկած նկարիչները: Նրանցից էր նաև Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսին: Շուրջ հինգ տարի՝ մինչև 1883 թվականը, աշխատելով Այվազովսկու արվեստանոցում, նա ստեղծել է ծովային և առափնյա մի շարք բնանկարներ, որոնք թե՛ մոտիվների ընտրությամբ, թե՛ կոմպոզիցիոն դասավորությամբ նմանվում են Այվազովսկու աշխատանքներին: Ա. Աղասյանը համեմատեց Կասեսսիի “Նավաբեկություն”, “Փարոս”, “Գիշեր: Վեզուվի ժայթքումը”, “Մրրկալից ջրեր”, Օդեսայի արևմտյան և արևելյան արվեստի թանգարանում ցուցադրվող “Կոստանդնուպոլիսը գիշերով” յուդաներկ կտավները և Այվազովսկու “Ծովափը գիշերով: Փարոսի մոտ”, “Կոստանդնուպոլիսը լուսնյակ գիշերով”, “Փոթորիկ ծովում: Գիշեր”, “Վեզուվի տեսարանը գիշերով”, “Փոթորիկ Այա հրվանդանի մոտ” հայտնի ստեղծագործությունները: “Իր ուսուցչի նման,– նշեց Ա. Աղասյանը,– Կասեսսին ևս ձգտում է բնությունն ու ծովը ներկայացնել կենդանի շարժման և փոփոխության մեջ՝ մերթ հանդարտության, անդորրի պահին, մերթ ահեղ, անսանձ տարերքի տեսքով: Ծովի ու երկնքի լայնարձակ, ազատ տարածությունները պատկերող նրա աշխատանքները ևս աչքի են ընկնում բնության կենդանի ընկալումներով ու ռոմանտիկ տրամադրությամբ, թեպետև չունեն Այվազովսկու ծովանկարներին հատուկ թարմությունն ու թեթևությունը, իսկ տեխնիկական վարպետությամբ և գեղարվեստական որակով, անշուշտ, զիջում են Այվազովսկու համանման կտավներին: Վերջինիս պես, Կասեսսին ևս իր նկարներն ավարտում էր արվեստանոցային պայմաններում, հաճախ էր անդրադառնում գիշերային տեսարաններին, փոթորկոտ ծովի կերպարին ու նավաբեկության մոտիվին: 1880 թվականին, երբ Այվազովսկին Թեոդոսիայում, սեփական առանձնատանն ու աշխատանոցին կից հանրային պատկերասրահ բացեց, նա մշտական ցուցադրության մեջ ընդգրկեց նաև իր արվեստագետ ընկերների ու հետևորդների աշխատանքները, որոնցից մի քանիսը Կասեսսիի նկարներն էին”:

Արվեստի ինստիտուտի Թատրոնի բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանը “Հովհաննես Այվազովսկին պոետական ներշնչումներում (Պ. Աղամ-

յան, Հովհ. Թումանյան)՝ զեկուցման մեջ նկատեց, որ ռոմանտիկ դերասան Պետրոս Ադամյանն Այվազովսկու արվեստի լույսով է դիտել ծովը փոթորկից առաջ: Դա արտահայտվել է նրա մի բանաստեղծության մեջ և ներդաշնակել է իր խաղային վարքագծին Համլետի դերում՝ հուզական պոռթկումի եզրին, կուլմինանտը հետաձգելով: “Նրա խաղում, – նշեց բանախոսը, – տեսել են ճշմարիտ հույզեր և կրքերի ռոմանտիկա, այն, ինչ հաստուկ է եղել Այվազովսկու արվեստին՝ նյութականության պատրանք և բնության տարերքի իդեալականացում: Իր բանաստեղծության մեջ Ադամյանը գույները դիտում է որպես բնության նյութական տարրեր և խորհրդակերպում է որպես զգայումի կերպաձևեր՝ ռեալիզմ և ռոմանտիզմ միաժամանակ, այն է՝ անդրանցում: Այվազովսկու արվեստի այս հատկանիշներն են ներշնչել Հովհաննես Թումանյանին իր երկու բանաստեղծություններում: Մի դեպքում նա բացարձակ ռոմանտիկ է՝ դիմում է բառերի պատկերային ուժգնությանը, խտացնում գույները, ստեղծում խոսքային հզոր ու ծանր կտավ, փոքր ծավալով տիեզերքն ամփոփող, երկրորդ դեպքում (“Մի հառաչանք”) հմայվում է պատկերի վեհությամբ ու տրվում վեհությունից ծնվող կարոտի զգացումին”:

Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Ալիս Ներսիսյանը “Երկու աշխարհների կիզակետում. Հովհաննես Այվազովսկի” զեկուցման մեջ նկատեց, որ ազգությամբ հայ Հովհ. Այվազովսկին XIX դարի ռուս մշակույթի անվանի ներկայացուցիչներից էր, ում ստեղծագործական և հասարակական կյանքը բազում թելերով կապված էր Ռուսաստանի հետ: “Բայց Այվազովսկին ուներ և իր բուն հայրենիքը, նա հայ ժողովրդի զավակն էր: Այվազովսկու կտավներից շատերը նվիրված են Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը: Նկարչի միջոցներով հրատարակվել են հայ պատմաբաններից ոմանց աշխատությունները: Նա անձնական և նամակագրական սերտ կապեր ուներ հայ մտավորականներից շատերի, հայության ճանաչված ներկայացուցիչների հետ, հայրենակիցների հանդեպ բարոյական և նյութական մեծ աջակցություն էր ցուցաբերում: Հայերը և Հայաստանը մեծանուն նկարչի համար հանդիսանում էին իր ներքին, հոգևոր կյանքի հիմքը, մինչդեռ Ռուսաստանը և ռուսական մշակույթը՝ իր արտաքին հաջողակ կյանքի ձեռքբերումներն արտացոլող հայելիներ էին”, – նշեց բանախոսը:

“Հովհաննես Այվազովսկին և Ուիլյամ Թյորները” զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանը նկատեց, որ հայազգի մեծանուն նկարչի գնահատողներից մեկը դարձավ անգլիացի մեծանուն ծովանկարիչ, Մեծ Բրիտանիայի Թագավորական ակադեմիայի անդամ Ուիլյամ Թյորները: Նրանց հանդիպումը պատահական էր. 1842 թ. Հռոմում Այվազովսկու ցուցահանդեսի ժամանակ Թյորները տեսնում է նրա “Նեապոլյան ծովածոցը լուսնյակ գիշերին” բնանկարը: Սակավախոս, մենակյաց, ինտելեկտուալ, արտահայտությունների մեջ ուղղախոս և կտրուկ, քչերի արվեստին հավանություն տվող անգ-

լիացի նկարիչը իտալերեն լեզվով գրված գովաբանական բանաստեղծության մեջ իր անկեղծ ու հիացական խոսքերն է հղում Այվազովսկուն:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանի “Հովհաննես Այվազովսկին որպես բնության քննախույզ” վերնագրով զեկուցման նպատակն էր իրազեկել, որ “Այվազովսկի” երևույթի ձևավորման ամենակարևոր շրջանն ուղենշային դարձավ նրա հետագա ողջ գործունեության համար, երիտասարդական տարիների ստեղծագործական որոնումներն էին: Այվազովսկին մշակեց բնության նկատմամբ միանգամայն նոր մոտեցում, որը բացակայում էր ժամանակի ուսումնական դասընթացներում: Խոսքը էտյուդային նախասիրություններից եկող, բնության գրկում բացօդյա քննախույզ պրպտումների, փոփոխվող լուսաօդային միջավայրի արտացոլման մասին է և այդ ամենը՝ արագ, առաջին վրձնահարվածների (առանց լրացուցիչ ուղղումների ու մշակման) միջոցով: Փաստորեն, Բարբիզոնցիներից անկախ Հ. Այվազովսկին անում էր այն, ինչին նվիրվել էին ֆրանսիական կերպարվեստի նորարար մեծերը՝ Թեոդոր Ռուսոն, Ժյուլ Դյուպրեն, Նարցիս Դիագր և այլք:

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակեց Արվեստի ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանի “Հովհաննես Այվազովսկին և Միխայիլ Գլինկան” զեկուցումը: Հանճարեղ ծովանկարչին և ռուսական ազգային օպերայի հիմնադրին ծանոթացրել էր նկարիչ Կառլ Բրյուլովը 1839 թ.: Այդ ժամանակ Գլինկան աշխատում էր “Ռուսլան և Լյուդմիլա” օպերայի վրա: Ժամանակակիցների վկայությամբ Այվազովսկին լավ ջութակ էր նվագում, քեմանիի (քյամանի) ոճով՝ ծնկին դրած: Հիմնականում նվագում էր Ղրիմի թաթարների ժողովրդական մեղեդիներ, որոնցից երեքը Գլինկան օգտագործել է “Ռուսլան և Լյուդմիլա” օպերայում. երկուսը՝ լեզգիներին, իսկ երրորդ մեղեդին՝ օպերայի երրորդ գործողությունից Andante-ում, Լյուդմիլայի ձեռքը խնդրող հերոսներից մեկի՝ խազարների խան Ռատմիրին բնութագրելիս:

Նստաշրջանի երկրորդ նիստն սկսվեց Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Գարեգին Քոթանջյանի “Հովհաննես Այվազովսկու գեղարվեստական լեզվի ձևավորման գործոնները” բանախոսությամբ:

“Հովհաննես Այվազովսկին և Վարդգես Սուրենյանցը” զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մանե Մկրտչյանը նկատեց, որ 1860-ականների վերջին մանուկ Վարդգես Սուրենյանցն առաջին անգամ հանդիպեց Հովհ. Այվազովսկուն: Բախշիսարայ այցելությունից հետո արված իր նկարների համար ապագա նկարիչն արժանացավ Այվազովսկու գովեստի խոսքերին և նվեր ստացավ

ներկեր: Մոտ երեսուն տարի անց Վ. Սուրենյանցը նկարագարեց Ալ. Պուշկինի “Բախչիսարայի շատրվանը” պոեմը և այն նվիրեց Հովհ. Այվազովսկուն:

Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանի զեկուցումը նվիրված է Հովհ. Այվազովսկու և Մխիթարյանների առնչություններին. 1840-ի հուլիսին Հովհ. Այվազովսկին մեկնում է Բուսալիա՝ այցելությունն սկսելով Վենետիկից, Սբ. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունում ապրում և աշխատում էր նրա ավագ եղբայրը՝ 28-ամյա Գաբրիելը, ում նկարիչը չէր տեսել 14 տարի: Բանախոսն անդրադարձավ Հովհ. Այվազովսկու հետաքրքրությանը Մխիթարյան միաբանության թանգարանում պահվող նկարագարոված աղոթագրքերի, բարձրարվեստ մանրանկարներով հարուստ և արժեքավոր հայկական հին ձեռագրերի նկատմամբ, նրա այն կտավներին, որտեղ պատկերված են Վենետիկը, Սբ. Ղազար կղզին և Մխիթարյան հայրերը, վերլուծեց “Բայրոնի այցը Մխիթարյաններին Սբ. Ղազար կղզում” նկարի ստեղծման շարժառիթները:

Դ. Կ. Այվազովսկու ստեղծագործությունը կինովավերագրողների աչքերով” զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովը քննության առավ “Այվազովսկի” (1994), “Այվազովսկու էֆեկտը” (2016) և “Այվազովսկի. Ծովի ալիքի վրա” (2017) վավերագրական ֆիլմերը:

Իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Սաթենիկ Մելիքյանը հանդես եկավ ““Ծովափնյա Հայաստանի” մեծանուն վարպետը” զեկուցմամբ:

Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյանի զեկուցումը նվիրված է 1903 թ. Ս. Պետերբուրգում Հովհ. Այվազովսկու հիշատակի առթիվ հրատարակված գեղարվեստական այլումին, որի նախաձեռնողներն էին գեղանկարիչ Դավիթ Օքրոյանցը և կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանցը: Բանախոսը քննության առավ Լեոյի “Հովհաննես Այվազովսկու կյանքը և գործունեությունը”, Դ. Օքրոյանցի “Ռուսական գեղարվեստը XIX դարում”, Ե. Բաղդասարյանցի “Երգ և ողբ մանս XIX դարում”, Ղ. քահ. Հովսեփյանի “Յուշիկներ հայկական երգեցողությունից” հոդվածները, Այվազովսկուն նվիրված Հովհ. Թումանյանի և Ա. Ծատուրյանի ստեղծագործությունները, անդրադարձավ պատկերագրքի երաժշտական հատվածում ներառված նոտային օրինակներին. Հովհ. Այվազովսկու հիշատակին նվիրված ռուս անվանի կոմպոզիտորներ Ցեզար Կյուլիի “Դ. Կ. Այվազովսկու հիշատակին” (1902) և Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի “Песенка” (1901) ստեղծագործություններին:

Վ. Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանի դասախոս Նինա Հայրապետյանը հանդես եկավ “Այվազովսկու ստեղծագործությունը և ծովի թեման ռոմանտիզմի դարաշրջանի գրականության մեջ” բանախոսությամբ:

Գիտական նստաշրջանի աշխատանքները եզրափակեց Աննա Ասատրյանի “Հովհաննես Այվազովսկին և հայ երաժիշտները” զեկուցումը, որտեղ անդրադարձ եղավ Թիֆլիսում հրատարակվող “Кавказский вестник” գիտական-գեղարվեստական ամսագրի 1900 թ. մայիսյան համարում տպագրված “Иван Константинович Айвазовский” – ծավալուն հոդվածին՝ նկարչի յուրօրինակ մահախոսականին, որի հեղինակն էր երաժշտագետ, հասարակական գործիչ, հրապարակախոս Վասիլի Կորզանովը (Բարսեղ Ղորղանյան): Ջեկուցողը բացահայտեց, որ հոդվածի բնաբանը՝

“Кисть вдохновенная упала
Из рук великого творца.
Могучий царь морской стихии
И моря пламенный поэт
Угас, и волны голубые
Поют прощальный свой привет”,

Բ. Ղորղանյանի բանաստեղծությունն է, որի հիման վրա 1902-ին ռուս կոմպոզիտոր Ցեզար Կյուին գրել է “Բ. Կ. Այվազովսկու հիշատակին” ռեքվիեմը: Այվազովսկիագիտության մեջ Ղորղանյանի սույն՝ ոչ այնքան լայն շրջանառություն գտած հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ դրանում բերված կենսագրական տվյալները վերցված են Այվազովսկու տիկնոջ՝ Աննա Բուռնազյանի քրոջ ամուսնու, ծագումով հույն գրող Սպիրիդոն Կաչիոնիի հետ մեծ նկարչի զրույցը ներկայացնող հոդվածից, որտեղ նկարիչը ձևակերպում է իր գեղագիտական հայացքներն ու սկզբունքները: Ջեկուցման մեջ անդրադարձ արվեց այն մեծ դերին, որն ունեցել է Հովի. Այվազովսկին հայ երաժիշտների՝ ջութակահար Հովհաննես Նալբանդյանի, երգիչ Բեզլար Ամիրջանյանի և կոմպոզիտոր Ալեքսանդր Մպենդիարյանի ստեղծագործական ճակատագրում. ի դեպ՝ կոմպոզիտորն Այվազովսկուն է նվիրել իր “Ղրիմի էսքիզների” առաջին սյուիտը (1903):

Նշենք, որ առաջիկայում լույս կտեսնի գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուն:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ,
ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ